



ՔԱՂԱՎԱՐ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՆԻՍՏԻ
ԱՐԶԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆԻՑ

20 նոյեմբերի 2008 թվականի N 47

25. ՀԱՆՐԱՅԻՆ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՄԱՍՆԱԳԵՏՆԵՐԻ ՈՒՍՈՒՑՄԱՆ,
ՇԱՐՈՒՆԱԿԱԿԱՆ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԵՎ ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՆԵՐԴՐՄԱՆ
ՈԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հանրային ֆինանսների կառավարման գործընթացի արդյունավետության ապահովման, «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 5-րդ մասով նախատեսված գործընթացների կազմակերպման, ինչպես նաև «Գանձապետական համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված հաշվապահների, մերքին աուդիտորների և գնումների գործի համակարգման պատասխանատուների անհրաժեշտ մասնագիտական կարողությունների ապահովման նպատակով՝

Հաստատել հանրային ֆինանսների կառավարման համակարգի մասնագետների ուսուցման, շարունակական վերապատրաստման և որակավորման համակարգի մերդրման ռազմավարությունը՝ համաձայն հաղելվածի:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ

2008 թ. դեկտեմբերի 27
Երևան



ՍԱՐԳՍՅԱՆ

Հաղելված
ՀՀ կառավարության 2008 թ.
նոյեմբերի 20-ի նիստի N 47
արձանագրային որոշման

Ո Ա Ջ Մ Ա Վ Ա Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն

ՀԱՆՐԱՅԻՆ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՄԱՍՆԱԳԵՏՆԵՐԻ ՈՒՍՈՒՑՄԱՆ,
ՇԱՐՈՒՆԱԿԱԿԱՆ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԵՎ ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՆԵՐԴՐՄԱՆ

1. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

1. Հայաստանի Հանրապետության հանրային հատվածում, որը ներառում է պետական կառավարչական հիմնարկները, տեղական ինքնակառավարման մարմինները, պետության և համայնքների կողմից ստեղծված ոչ առևտրային կազմակերպություններն ու այլ տիպի հիմնարկները, ֆինանսների կառավարման գործառույթներն իրականացվում են այդ կազմակերպություններում հետևյալ հիմնական պաշտոնները զբաղեցնող անձանց կողմից.

1) պետական կառավարչական հիմնարկներում և տեղական ինքնակառավարման մարմիններում՝ գլխավոր ֆինանսիստ, գլխավոր աուդիտոր, գլխավոր հաշվապահ, հաշվապահ, գնումների գործի համակարգման պատասխանատու,

2) ոչ առևտրային կազմակերպություններում, պետական և համայնքների հիմնարկներում՝ ֆինանսիստ, գլխավոր հաշվապահ, հաշվապահ, գնումների գործի համակարգման պատասխանատու:

2. Հանրային հատվածի ֆինանսների կառավարման գործընթացի հետ կապված հարաբերությունները հիմնականում կարգավորվում են «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին», «Գանձապետական համակարգի մասին», «Գնումների մասին», «Հաշվապահական հաշվառման մասին», «Պետական կառավարչական հիմնարկների մասին», «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին», «Պաշտպանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքներով և դրանց հիման վրա ընդունված այլ ակտերով: Այդ գործընթացի կատարման կազմակերպումը և մեթոդական ղեկավարումը հիմնականում իրականացնում է Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարությունը:

3. Վերը նշված պաշտոնյաները (այսուհետ՝ պաշտոնյաներ) պատասխանատու են ֆինանսների կառավարման գործընթացի տարբեր փուլերում իրականացվող առանձին գործառույթների համար: Նշված գործառույթները բազմաթիվ և տարաբնույթ են, իսկ դրանց իրականացումը պատասխանատու պաշտոնյաներից պահանջում է

մասնագիտական գիտելիքներ: Այսինքն՝ ֆինանսների կառավարման գործընթացի արդյունավետությունը մեծապես պայմանավորված է նշված պաշտոնյաների մասնագիտական կարողություններով:

4. Հայաստանի անկախացումից հետո նշված պաշտոնյաների համար կազմակերպվել են վերապատրաստման առանձին ծրագրեր, որոնք սակայն հիմնականում վերաբերել են նշված համակարգի առանձին տարրերին և չեն ապահովել մասնագիտական ամբողջական տեղեկատվության հասանելիությունը: Հաշվի առնելով, որ Հայաստանում տնտեսական և պետական կառավարման համակարգերի փոփոխությունները, ինչպես նաև նշված համակարգերի կատարելագործման նպատակով իրականացվող բարեփոխումները հանգեցրել են նաև հանրային ֆինանսների կառավարման համակարգի նշանակալի փոփոխության, նկատելի է, որ հանրային ֆինանսների կառավարման գործընթացում ներգրավված պաշտոնյաները կարիք ունեն շարունակական վերապատրաստման:

5. Այսպիսով՝ նշված պաշտոնյաների ուսուցման և շարունակական վերապատրաստման խնդիրը արդիական է ու մշտական ուշադրության կարիք ունի: Այս խնդրի լուծման համար պետք է սահմանվի այնպիսի համակարգ, որի միջոցով մի կողմից ապահովվեն պայմաններ պաշտոնյաների ուսուցման և շարունակական վերապատրաստման, և մյուս կողմից՝ այդ պաշտոնյաների անհրաժեշտ որակավորման առկայությունը երաշխավորելու համար: Որպես կանոն՝

1) ուսուցման խնդիրը լուծվում է բարձրագույն ուսումնական հաստատությունների միջոցով, որտեղ պատրաստվում են պետության կողմից որպես գործատու սահմանված որակավորման պահանջներին բավարարող մասնագետներ, որոնք այնուհետ հավակնում են համապատասխան պաշտոններ զբաղեցնելուն: Առանձին դեպքերում պետությունը ֆինանսավորում է ուսուցումը: Հանրային ֆինանսների համակարգը որակյալ աշխատողներով համալրման գործում չի կարելի անտեսել նաև միջին մասնագիտական հաստատությունների օգտագործման հնարավորությունները:

2) վերապատրաստման խնդիրը լուծվում է գործատուի, տվյալ դեպքում պետության կողմից, քանի որ միակողմանի փոփոխելով հանրային ֆինանսների կառավարման համակարգը, վերջինս՝ որպես հետևանք, միակողմանի փոփոխում է նաև նշված պաշտոնները զբաղեցնող մասնագետներին ներկայացվող մասնագիտական պահանջները: Հետևաբար վերապատրաստման հետ կապված ծախսերը ֆինանսավորում է գործատուն:

3) որակավորումը իրականացվում է մասնագիտացված մարմնի կողմից, որը երաշխավորում է որակավորված անձի՝ համարժեք մասնագիտական կարողությունների առկայությունը: Հիմնականում մասնագիտացված մարմին է համարվում նշված պաշտոնյաների շահերի ընդհանրության հիման վրա գործող (ստեղծված)

արհեստավարժների հասարակական միավորումը (ները), իսկ վերջինիս բացակայության դեպքում՝ հանրային ֆինանսների բնագավառում քաղաքականություն մշակող և իրականացնող պետական մարմինը: Որակավորման տրամադրման հետ կապված ծախսերը ֆինանսավորում է որակավորվող անձը:

6. Անհրաժեշտ է հստակորեն տարանջատել նշված երեք գործընթացները (հասկացություններ), նկատի ունենալով, որ թեպետ դրանք հանդիսանում են միևնույն համակարգի բաղկացուցիչներ, սակայն այդ գործընթացները ինչպես կազմակերպչական առումով, այնպես էլ իրենց բնույթով ու հետապնդվող նպատակներով տարբերվում են:

II. ՆԵՐՂՐՎՈՂ ՀԱՄԱԿԱՐԳԸ

7. Ներդրվող համակարգի նպատակը հանրային ֆինանսների կառավարման գործընթացի կազմակերպումն է՝ համապատասխան մասնագիտական կարողություններ ունեցող աշխատակիցների (այսուհետև՝ մասնագետներ) միջոցով: Այդ նպատակով նախատեսվում է.

1) հանրային ֆինանսների կառավարման գործընթացում հնարավորինս ներգրավվել բազային (ակադեմիական) համապատասխան մասնագիտացում ստացած անձանց,

2) մասնագիտական կարողությունների պահպանման և անընդհատ զարգացման նպատակով ապահովել մասնագետների շարունակական վերապատրաստումը, և

3) ապահովել մասնագետների մասնագիտական համարժեք կարողությունների երաշխավորման՝ որակավորման համակարգի առկայությունը:


8. Սուղարկվող համակարգում ուսուցում, շարունակական վերապատրաստում և որակավորում հասկացությունները օգտագործված են հետևյալ իմաստով.

Ուսուցում՝ հանրային ֆինանսներ մասնագիտացմամբ մագիստրոսական ծրագրերի կազմակերպում, որը ընդգրկում է հանրային հատվածի հաշվապահական հաշվառում, պետական գնումներ, ներքին և արտաքին առևտրի ու հարկաբյուջետային գործընթացին առնչվող այլ ուղղություններ:

Շարունակական վերապատրաստում՝ մասնագետների մասնագիտական որակավորման պահպանմանը և բարձրացմանն ուղղված ծրագրերի իրականացում:

Որակավորում՝ մասնագետների մասնագիտական կարողությունների գնահատում և որակավորման շնորհում:

Ներդրվող համակարգում ուսուցումը, շարունակական վերապատրաստումը և որակավորումը նախատեսվում և իրականացվում է հետևյալ կազմակերպությունների միջոցով.



Ուսուցում

1. Ուսուցման գործընթացը սկզբնական փուլում նախատեսվում է հիմնականում կազմակերպել պետության կողմից հիմնադրված բարձրագույն ուսումնական հաստատությունների միջոցով: Այս համաձայնեցված չի սահմանափակում ոչ պետական կազմակերպությունների կողմից ուսուցման ծրագրերի կազմակերպման հնարավորությունը: Այս նպատակով համապատասխան ուղղվածություն ունեցող բարձրագույն ուսումնական հաստատությունների մագիստրոսական ծրագրերում կներառվի «Հանրային ֆինանսներ» մասնագիտացումը: Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարությունը կհաստատի այն բարձրագույն ուսումնական հաստատությունների ցանկը, որտեղ սկզբնական փուլում պետք է կազմակերպվի ուսուցման գործընթացը:

2. Ուսանողների քանակը (պահանջարկը) կորոշվի հանրային հատվածում այդ մասնագետների նկատմամբ ձևավորված պահանջարկի կանխատեսվող ցուցանիշի հիման վրա:

3. Սկզբնական փուլում ուսուցման գործընթացի ֆինանսավորումը հիմնականում պետք է ապահովվի պետության միջոցների հաշվին՝ պետական պատվերի և պետական նպաստների համակարգերի միջոցով: Այս նպատակով «Հանրային ֆինանսներ» մասնագիտացումը կներառվի պետության կողմից ֆինանսավորվող մագիստրոսական ծրագրերում:

4. Ուսումնական ծրագրերը կկազմվեն բարձրագույն ուսումնական հաստատությունների կողմից՝ մասնագիտության չափորոշիչին համապատասխան և

կհաստատվեն Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության կողմից: Մինչև մասնագիտության չափորոշիչի և ուսումնական ծրագրերի հաստատումը դրանք կհամաձայնեցվեն Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության հետ: Ուսումնական ծրագրերում հանրային հատվածի հաշվապահական հաշվառում, հարկաբյուրեցտային, այդ թվում գանձապետական համակարգ, պետական գնումներ, ներքին և արտաքին աուդիտ, և հարակից այլ առարկաները պետք է գերակշռող մաս կազմեն:

5. Մագիստրոսական թեզերի թեմաների ընտրությունը կիրականացվի՝ հանրային ֆինանսների կառավարման համակարգում առկա խնդիրների կարգավորման հնարավոր լուծումները բացահայտելու նկատառումից: Այս աշխատությունները կարող են օգտագործվել պետական մարմինների կողմից՝ իրենց գործունեության բարելավման ուղղությունների մշակման ժամանակ:

Շարունակական վերապատրաստում

1. Շարունակական վերապատրաստման գործընթացը նախատեսվում է կազմակերպել հանրային ֆինանսների ոլորտում մասնագիտացված՝ կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների միջոցով: Այս նպատակով ներկայումս հիմնականում կօգտագործվեն ԲՈՒՀ-րի հնարավորությունները, իսկ առանձին դեպքերում՝ թեմատիկ զուտ մասնագիտական սեմինար-դասընթացների իրականացման նպատակով՝ նաև Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության «Ուսուցման կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության կարողությունները: Ուսուցման կենտրոնն ունի բավարար, սակայն սահմանափակ կարողություններ հանրային հատվածում ներգրավված բոլոր մասնագետների շարունակական վերապատրաստման համար: Հետևաբար անհրաժեշտ է զարգացնել ուսուցման կենտրոնի կարողությունները, կամ շարունակական վերապատրաստման ծրագրերի կազմակերպումը կատարել նաև այլ կազմակերպությունների միջոցով: Այդ կազմակերպությունների ընտրությունը կիրականացվի մրցութային կարգով: Այդպիսի ծառայություններ կարող են մատուցվել այս բնագավառում գործող համանման կրթական հաստատությունների կողմից:

2. Շարունակական վերապատրաստման ծրագրերին մասնակցությունը պետք է լինի պարտադիր, իսկ դասընթացները պետք է կազմակերպվեն որոշակի պարբերականությամբ՝ ոչ պակաս քան երեք տարին մեկ անգամ: Միջնաժամկետից երկարաժամկետ հատվածում սա կհամարվի նվազագույն պահանջ, քանի որ առաջ կգան բազմաթիվ թեմաներ, որոնց պետք է ծանոթանան մասնագետները, և անհրաժեշտություն կառաջանա ավելի մեծ համախալականությամբ կազմակերպել վերապատրաստման դասընթացները: Հաշվի առնելով, որ մասնագետների մի մասը հանդիսանում են պետական ծառայողներ, վերջիններիս մասնագիտական վերապատրաստումը

կիրականացվի պետական (քաղաքացիական, համայնքային և այլն) ծառայողների համար կազմակերպվող վերապատրաստման ծրագրերի շրջանակում: Քաղաքացիական (համայնքային և այլ) ծառայության համակարգում չընդգրկված պաշտոնների համար վերապատրաստման ծրագրերը հնարավորինս կիրականացվեն քաղաքացիական (համայնքային և այլ) ծառայողների համար նախատեսված համանման ընթացակարգերով: Վերապատրաստման ծրագրերն ամբողջապես կֆինանսավորվեն պետական բյուջեի, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ չարգելված այլ միջոցների հաշվին: Շարունակական վերապատրաստման ծրագրերը կկազմվեն Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության հաստատած պահանջներին համապատասխան:

3. Հանրային ֆինանսների կառավարման գործընթացի կարգավորման համար պատասխանատու մասնագետները պետք է հնարավորինս ներգրավվեն շարունակական վերապատրաստման ծրագրերում՝ իրենց փորձը փոխանցելու նպատակով:

Որակավորում

1. Որակավորման՝

1) գործընթացը նախատեսվում է կազմակերպել մասնագիտացված ոչ պետական մարմնի (ների) միջոցով, որը կերաշխավորի որակավորված անձի՝ համարժեք մասնագիտական կարողությունների առկայությունը: Սակայն, համակարգի ներդրման սկզբնական փուլում, այս գործընթացը կկազմակերպվի հանրային ֆինանսների բնագավառում քաղաքականություն մշակող և իրականացնող պետական մարմնի՝ Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կողմից: Այս իրողությունը բացատրվում է Հայաստանի Հանրապետությունում համարժեք կարողություններ ունեցող հասարակական միավորումների բացակայության հանգամանքով: Հայաստանի Հանրապետությունում համապատասխան ենթակառուցվածքների զարգացման դեպքում որակավորման գործընթացի կազմակերպման լիազորությունը կվերապահվի ոչ պետական հատվածի կազմակերպության (ների):

2) գործընթացի շրջանակում Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարությունը կհանդիսանա այս բնագավառում քաղաքականություն մշակող և իրականացնող պետական մարմինը, որը

ա) մշակում է որակավորման տրամադրման կարգը, այդ թվում որակավորման ստանդարտները (մոդուլները),

բ) վերահսկողություն է իրականացնում որակավորման գործընթացի կազմակերպման նկատմամբ,

գ) իրականացնում է որակավորման գործընթացի հետ կապված Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված այլ լիազորություններ:

2. Որակավորում տրամադրելու նպատակով համապատասխան մասնագիտացումների գծով կկազմակերպվեն քննություններ: Քննությունների արդյունքներով, անձին կարող է շնորհվել հետևյալ որակավորումը՝

- Որակավորված Գլխավոր հաշվապահ,
- Որակավորված Հաշվապահ,
- Որակավորված Գլխավոր աուդիտոր,
- Որակավորված Աուդիտոր,
- Որակավորված Գնումների մասնագետ:

3. Անձը կարող է զբաղեցնել համապատասխան պաշտոն, եթե նրան շնորհվել է տվյալ պաշտոնի անձնագրով նախատեսված որակավորում: Որակավորումը շնորհվում է անժամկետ: Շարունակական մասնագիտական վերապատրաստման պարտադիր ծրագրերին չմասնակցելու կամ այլ պարտադիր պայմանները չպահպանելու հիմքով անձը կարող է ազատվել զբաղեցրած պաշտոնից՝ Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված դեպքերում և կարգով: Պաշտոնների և դրանց զբաղեցման համար պահանջվող որակավորումների ցանկը՝ ըստ կազմակերպությունների, հաստատում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը՝ Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության ներկայացմամբ, նախապես քննարկելով շահագրգիռ պետական մարմինների, այդ թվում Հայաստանի Հանրապետության քաղաքացիական ծառայության խորհրդի հետ:

4. Որակավորման գործընթացը հիմնվում է համանման մասնագետների որակավորման միջազգային ստանդարտների (մոդուլների) վրա, ինչպիսիք են օրինակ ACCA, CPA և այլն: Ընդ որում, եթե անձը ունի միջազգային համապատասխան որակավորում, ապա վերջինս համարվում է Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կողմից որակավորված: Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կողմից որակավորված են համարվում նաև՝

- 1) մինչև որակավորման պահանջը ուժի մեջ մտնելը համապատասխան պաշտոն զբաղեցնող անձիք,
- 2) սույն ռազմավարության համաձայն բարձրագույն ուսումնական հաստատություններում «Հանրային ֆինանսներ» մասնագիտությունը (որակավորումը) ստացած անձիք:

III. ՀԱՄԱՎՈՐԳԻ ՆԵՐԴՐՄԱՆ ՌԱԶՄԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ

1. Ուսուցման, շարունակական վերապատրաստման և որակավորման համակարգի ներդրման աշխատանքները իրականացվելու են 2009-2013 թվականների ընթացքում հետևյալ երեք հիմնական փուլերով՝

- 1) նախապատրաստում,

- 2) գործընթացի կազմակերպում և ենթակառուցվածքների զարգացում,
3) իրականացում:

1. Նախապատրաստում

1) Քանի որ առաջարկվող բարեփոխումների շրջանակը ներառում է ամբողջ հանրային հատվածը, այդ աշխատանքների արդյունավետ կազմակերպման համար, այս գործընթացում ներգրավված բոլոր մարմինների և դրանց համապատասխան պաշտոնատար անձանց մոտ պետք է ձևավորել համարժեք կարողություններ:

2) Այս նպատակին հասնելու առաջին միջոցը Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից սույն ռազմավարության հաստատումն է: Ռազմավարության հաստատումը՝

ա. հայտարարում է Հայաստանի Հանրապետության կառավարության նպատակադրումը և պատրաստակամությունը համակարգի ներդրման հարցում,

բ. հնարավորություն է ընձեռում բոլոր շահառուներին բարեփոխումների հետ կապված ձևավորել հստակ պատկերացում իրենց իրավունքների և պարտականությունների, ինչպես նաև տարածամեծ հատվածներում համակարգում կատարվելիք փոփոխությունների մասին,

գ. աջակցում է բարեփոխումների լուսաբանմանը և հանրության իրազեկմանը:

3) Էական նշանակություն ունի շահագրգիռ կազմակերպությունների և մասնագետների շրջաններում համակարգի ներդրման հետ կապված աշխատանքների լուսաբանումը և վերջիններիս կողմից դրանց ընթերցումը: Այդ նպատակով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարությունը պարբերաբար կկազմակերպի սեմինար-խորհրդակցություններ, կիրատարակի ուսումնամեթոդական նյութեր, կհամագործակցի զանգվածային լրատվության միջոցների հետ և այլն:

4) Նախապատրաստման աշխատանքների շրջանակում Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարությունը, համագործակցելով շահագրգիռ կազմակերպությունների հետ, Հայաստանի Հանրապետության վարչապետի համապատասխան որոշման համաձայն, կմշակի և Հայաստանի Հանրապետության կառավարության քննարկմանը կներկայացնի համապատասխան իրավական ակտերի նախագծեր, որոնց ընդունմամբ կստեղծվի իրավական հիմք համակարգի ներդրման համար:

2. Գործընթացի կազմակերպում, ենթակառուցվածքների զարգացում

1) Համակարգի ներդրման գործընթացի կազմակերպման և ենթակառուցվածքների զարգացմանն ուղղված աշխատանքները կիրականացվեն հետևյալ հիմնական ուղղություններով՝

ա. բարձրագույն ուսումնական հաստատությունների կարողությունների զարգացում,
բ. Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության ուսուցման կենտրոնի կարողությունների զարգացում և բավարար կարողություններ ունեցող այլ կրթական հաստատությունների բացահայտում,

գ. որակավորման գործընթացի կազմակերպման համար անհրաժեշտ իրավական դաշտի և ինտիտուցիոնալ կարողությունների ձևավորում:

2) Բարձրագույն ուսումնական հաստատությունների կարողությունների զարգացումը ենթադրում է հետևյալ սկզբնական միջոցառումների կատարումը՝

ա. համապատասխան բարձրագույն ուսումնական հաստատություններում սահմանել առանձին գիտատեսական միավոր՝ ամբիոն, հանրային ֆինանսներ մասնագիտության գծով մագիստրոսական կրթական ծրագրեր կազմակերպելու նպատակով: Այս պահանջը չի ենթադրում նոր միավորի ստեղծում, քանզի այդ գործառույթը կարող է վերապահվել տվյալ կազմակերպության կառուցվածքում գործող համապատասխան միավորի:

բ. հաստատել ուսումնական ծրագրերը, գիտամեթոդական ու կրթական գործընթացի կազմակերպման համար պահանջվող այլ նյութերը:

գ. հաստատել «Հանրային ֆինանսներ» մասնագիտությամբ ուսուցանվող մասնագետների թվաքանակի որոշման, ինչպես նաև ուսումնական գործընթացի համապատասխան բյուջեներից ֆինանսավորման կարգը:

3) Շարունակական վերապատրաստման գործընթացի կազմակերպման համար պետք է ապահովել հետևյալ սկզբնական միջոցառումների իրականացումը՝

ա. հաստատել վերապատրաստման ծրագրերի կազմակերպման կարգը,

բ. գնահատել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության ուսուցման կենտրոնի կարողությունները և որոշել այս հաստատության միջոցով վերապատրաստման ենթակա պաշտոնյաների շրջանակը,

գ. բացահայտել վերապատրաստում իրականացնող այլ կազմակերպություններ: Այս կազմակերպություններին կպատվիրվի վերապատրաստել այն մարմինների մասնագետների, որոնք ընդգրկված չեն ուսուցման կենտրոնի կողմից կազմակերպվող վերապատրաստման ծրագրերում,

դ. սահմանել շարունակական վերապատրաստման աշխատանքների ֆինանսավորման աղբյուրներն ու կարգը,

ե. հաստատել շարունակական վերապատրաստման ծրագրերը և ուսումնական ծեռնարկները՝ ըստ մասնագիտությունների:

4) Որակավորման գործընթացի կազմակերպման համար անհրաժեշտ իրավական դաշտի և ինտիտուցիոնալ կարողությունների ձևավորման համար պետք է ապահովել հետևյալ սկզբնական միջոցառումների կատարումը՝

ա. հաստատել որակավորման տրամադրման և որակավորումից զրկելու կարգը ու որակավորման ենթակա մասնագիտությունների ցանկը:

բ. մշակել և հաստատել որակավորման գործընթացի կազմակերպման լիազորությունը ոչ պետական հատվածի կազմակերպություններին վերապահվելու չափանիշները:

5) Որակավորման պահանջը ուժի մեջ մտնելը, ինչպես նաև որակավորման գործընթացը կազմակերպելու լիազորությունը մասնագիտացված ոչ պետական մարմնին (ներին) վերապահելու ժամկետը կսահամանվի համապատասխան իրավական ակտով, բայց ոչ ուշ քան 2013 թվականը: Մինչև նշված ժամկետի լրանալը, որակավորում պահանջող պաշտոն զբաղեցնող մասնագետների համար Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կողմից կկազմակերպվեն վերապատրաստման ծրագրեր:

6) Անհրաժեշտ է նկատել, որ միջոցառումների նշված թվարկումը սպառիչ չէ և դրանց իրականացման արդյունքներով անհրաժեշտ կլինի վերազնախառել կարիքները և կազմել գործողությունների նոր տարաժամկետ ծրագիր:

7) Ուսուցման, շարունակական վերապատրաստման և որակավորման գործընթացների կազմակերպման համար պահանջվող ֆինանսական միջոցների ընդհանուր չափը որոշելու համար հետազայում կպահանջվի առանձին ուսումնասիրություն, որը կիրականացվի Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կողմից:

3. Իրականացում

1) Համակարգի ներդրման գործողությունների պլանը և իրականացման ժամանակացույցը սահմանում է Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարը:

